WIEN

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D.   202 West 23d St. New York, N. Y.   Vol. IV, 1894

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23d St.,
New York,
U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամէն երկրի համար
երկու տոլար կամ տասն ֆրանք
կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թանի կարեւոր հեռագիրներ — Ս. Հայրապետը կը խօսի — Անդրանիկ կոնդակ Օրհնութեան Տ. Տ. Մկրտիչ Սրբազնագոյն Կաթողիկոսի· — Արտաքին Քաղաքականութիւն Հայոց. Միացեալ Նահանգք և Հայաստան.— Պոլսական Նամականի. Աներևոյթէն Նամակ Բ.— Նամակ Ախլաթէն.— Մոնդէսգիէօի Նախագուշակութիւնը Օսմանեան Կայսրութեան նկատմամբ.— Հայունեաց Ատելութիւն Ընդդէմ Թրքաց.— Նամակ Պոսթընէն.— Նամակ Հէյվըրհիլէն. Ամերիկայի Պանդուխտ Հայերը.— Ամերիկայի Հայոց համար. Քաղաքավարական կերպեր այցելութեան և Տեսակցութեան ատեն· — Հայքի Թղթակցութիւն.— Անգլիերէն Հայոց Պատմութիւն.— Այլ և Այլք։

ԹԱՆԻ ԿԱՐԵՒՈՐ ՀԵՌԱԳԻՐ

Երկու հարիւր հեծելազօրք, մէկ զօրապետ և տասն սպայք մեկնած են այս գիշեր, մասնաւոր շոգեկառքով, դէպ յԷնկուրի, կառավարչին խնդրանօք։ Եոզղաթ պիտի երթան, ուր նոր խռովութիւնք ծագեր են։ Յամասիա ամբոխն ազատեր է հայ բանտարկեալներն։

Ի Կեսարիա, եօթնասուն գրգռիչ յայտարարութիւնք փակցուած գտնուեր են, հեղինակք անծանօթ կը մնան։

Ի Կէմէրէկ, արիւնահեղ կռիւ պատահեր է տրոց հաւաքման առթիւ. Նոյն տեղն 17 մուսիլմաններ ձերբակալուած են, որք Ծննդեան առթիւ Հայերն ջարդելու դաւադիր եղած էին։

Փետր. 26ին հեռագիրն կը ծանուցանէ թէ Սուլթան Համիտ տկար է եւ չէ կըրցած Բրիտանական Նոր դեսպանն ընդունիլ։

Կ. Պոլսէն հեռագիր մի, փետր. 26 թուականաւ, կը ծանուցանէ թէ Ամերիկեան դեսպանատանքարտուղարն Բ. Դուռն երթալով Տէր Թէրէլի կողմէն խորին ցաւ յայտնած է այն սուտ հրատարակութեան նկատմամբ որով հռչակուեցաւ իբր թէ Հայ-ամերիկացի բանտարկեալներուն առթիւ զրահաւոր յղելու սպառնացած լինէր։

Ս. ՀԱՅՐԱՊԵՏՆ

ԿԸ ԽՕՍԻ

«Հայք» ևս այսօր իւր ընթերցողաց առջեւ կը դնէ ամենայն Հայոց Ս. Հայրապետի անդրանիկ կոնդակին օրինակն։

Կոնդակին մէջ ուշադրութիւն գրաւող բաներէն մին Հայրիկի սիրոյն մեծութիւնն է որ իւր մէջ գիտակցօրէն կ'առնու կ'ընդգրկէ բովանդակ ազգն։ Պատրիարքներէն սկսեալ մինչև դպրոցական մանուկներն, մեծատուններէն ըսկսեալ մինչև պարզ շինականներն կը տեսնէ իւր վերատեսչական աչքն արծուատես։ Սիրալիր Հովուապետն անոյշ խօսք մ'ունի ամեն մէկ ոչխարին ու գառնուկին համար, և կը ջանայ որ ամենքն լըսեն, և ոչ ոք մնայ առանց մասնաւոր ակնարկի։ Մաքի մշակք ալ հողի մշակաց հետ կ'ընդունին Նորին Սրբութեան ողջոյնն։

Ողջոյնն ինքնին, գալով այդ սուրբ շրթունքէ, բաւական է ամենից մէջ լաւագոյն, ազնուագոյն զգացումներն վառելու, և սակայն Հայրապետն մէկ մէկ բառով մի մի կենսաւէտ խրատ, յորդոր, միտք կուտայ իւրաքանչիւրին։

Մեծատան կը հասկացունէ թէ պարտի բարերարել և ողուովն «զլոյսն ի լոյս հանել։» Խմբագիրներն յատկապէս կը յիշէ և երկիցս կը շշնջէ նոցա ականջին «զգո՛յշ, զգո՛յշ։» Քահանայից դասուն կը ցուցնէ իրենց պաշտօնին մեծութիւնն, չլինի՛ թէ քարոզիչ վարդապետաց վերայ ձգեն բոլոր պատասխանատուութիւն. քահանայք պահապան են «ընտանեկան սըրբութեան։» Իսկ հովուաց և Առաջնորդաց կը գոչէ քաջ Հովուապետն թէ «հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։» Այո՛, այժմ աւելի քան երբէք պարտ է հովուին քաջ լինիլ, զի գայլք շատ են հօտին մէջ և արջք օրհասականք կատաղիք։

Ընթե՛րցող, կարդա՛, կարդա՛ ուշի ուշով մեր պաշտելի Հայրիկի այդ իմաստալիր և սիրալիր կոնդակն ու սքանչացիր։ Կարդացէ՛ք, վանա՛հարք, և իմացէք թէ ձեր պարտքն ոչ լոկ վանքի շէնքն խնամել այլ և նախնեաց մտքի ու սրտի արդիւնքն պահպանել, զայնս սերմանել աճեցունել է։ Կարդացէ՛ք, դաստիա՛րակք, և ի միտ առէք թէ մանկանց մտքին ինչպէս նաև հոգւոյն սնուցիչք էք դուք, և զնոսա կրկին կենաց պարտիք պատրաստել։ Կարդացէ՛ք, գիւղա՛ցիներ, ու հասկացէ՛ք թէ հողն չէք մշակեր լոկ հաց ուտելու համար, այլ և զհողն իբրեւ հայրենիքի մասն, իբրեւ ազգային անդին աւանդ պահպանելու բարձր պաշտօնն ունիք և թէ չպարտիք հեռանալ Հայաստանէն։ Կարդացէք և դուք, ո՛ հովիւք և առաջնորդք, և խելամուտ եղէք թէ Հայրապետն իւր պաշտօն կատարել չէ կարող եթէ «հայրերու պետ», չլինի, այսինքն եթէ դուք «Հօր» պաշտօն չկատարէք. և ոչ ալ «վերատեսուչն» վերատեսչի պարտիքն կրնայ կատարել եթէ իւր ներքև տեսուչներ չկենան, աչալուրջ և քաջ հովիւներ որք իրենց հօտին առաջնորդեն, տեսնող, լուսալիր աչօք։

Ազգն բարդ կազմակերպութիւն մ'է. ազգին գլուխն միայն այն պայմանաւ կրնայ իւր բարձր ղեկավարութիւնն անելեթէ ամբողջին մասունքն լինին իրենց տեղերն և կատարեն իրենց պաշտօններ։ Կաթողիկոսն չէ կարող ամբողջին պաշտօններն կատարել, այլ ամեն մասին ձայն կուտայ, հրահանգ կուտայ ըմբռնել իւր պաշտօնի բնութիւնն և կատարել զայն։ Երանի՛ անոնց որք խոնարհ և երկիւղած հոգւով կը լսեն Հովուապետի հոգեշունչ ձայնին։

ԱՆԴՐԱՆԻԿ

ԿՈՆԴԱԿ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻՉ ՍԲԲԱԶՆԵՐԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՍՆԵԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ողջոյն քեզ, Առաքելական Եկեղեցի Հայաստանեայց, Թադէոսի, Բարթուղիմէ-

ոսի և Գրիգորի աւետարանաւ ծնեալք ի Քրիստոս, աճեալք և զարգացեալք հաւատովք Աստուածպաշտութեան:

Ողջոյն քեզ, Մայր Սիոն լեառն Աստուծոյ Երուսաղէմ. եթէ ի քեզ երևեցաւ լոյսն աշխարհի Մարմնացեալ Փրկիչն, նոյն Միածին էջ ի Հօրէն, եդ զհիմն Արարատայ Եկեղեցւոյն լուսակերտեալ սուրբ Էջմիածնի:

Ողջոյն քեզ, Տուն և առաքելական Աթոռ Սրբոց Յակովբեանց: Ողջոյն համայն միաբանական ուխտին Հայոց որ իբրև խաչակիր զինուոր տքնիք և պաշտէք զանօրինական սուրբ տեղիս և ամենայն անձնուիրութեամբ պաշտպանէք զվիճակն Հայոց ցանկալին և նախանձելին համայն ազանց:

Ողջոյն Ձեզ, կաթուղիկոսունք և Պատրիարքունք, որ ընդ իս համալծակից Եղբայր էք ի վարել և տանել զպաշտօն Քրիստոսի Եկեղեցւոյն. գիտէ՞ք թէ քանի՞ մեծ է պատասխանատուութիւն մեր առաջի մեծ Հովուապետին զի իւրաքանչիւր ոք ի մէնջ զիւր հօտին համարս ունի տալ:

Ողջոյն Ձեզ, Հովիւք և առաջնորդք փոքրիկ հօտին Հայոց, որ արթուն աչօք հսկէք և արածէք զհաւատացեալ հօտն Քրիստոսի, յիշելով զբան Տեառն թէ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց:»

Ողջոյն Ձեզ, վարդապետք Եկեղեցւոյ, որ ուսուցանէք և աւետարանէք զԲանն կենաց. մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք զժողովուրդ, զի լի եղև տրտմութեամբ. թողեալ լիցին մեղք իւր, ասէ Աստուած:

Ողջոյն Ձեզ, Քահանայք Բարձրելոյն Աստուծոյ, որ մատակարար էք սուրբ խորհրդոյ Եկեղեցւոյն, դաստիարակք և պահապան ընտանեկան սրբութեան և գիտէ՞ք թէ քանի՞ մեծ է պաշտօն Ձեր:

Ողջոյն Ձեզ, Սարկաւագունք, որ խունկ արկանէք առաջի Սեղանոյն Աստուծոյ և մատակարար էք սրբոյն և աղքատին, յիշեցէք զԽադ Սարկաւագն մեծին Ներսիսի և նմանողք լերուք նմա:

Ողջոյն Ձեզ, Դպիրք, որ քաղցրաձայն երգօք Շարականաց և տաղից՝ շարժէք զհոգին ջերմեռանդութեան ի ժողովուրդն պաշտել և սիրել զԱստուած, դուք զվերին սրբարան դասուցն բերէք զնմանութիւն:

Ողջոյն Ձեզ, Հարք և եղբարք վանականն ուխտին, որ պահապան հրեշտակք էք հնացեալ Նշխարաց վանորէից, որք յաւերժական պարծանաց յիշատակ են մեր նախնի կրօնաւոր և գրասէր սուրբ հարց:

Ողջոյն Ձեզ, վարժապետք և ուսուցիչք, Ձեզ յանձնեալ է ազգային կրթութիւն և դաստիարակութիւն մանկանց ի պէս պէս ուսմունս և գիտութիւնս որոյ նպատակն է միայն վարել և տանել զմարդիկ ի լաւագոյն կեանս, ոչ միայն ի բարեբաստիկ վիճակս աշխարհի, այլ և ի Վերին Քրիստոսի արքայութիւն:

Ողջոյն Ձեզ, խմբագիրք Հայոց, որ ճգնիք անդադար յաշխատութիւն և իբրև հրապարակախօս մունետիկ, գրով և թղթով վարէք զժողովուրդն ի յառաջդիմութիւն և քաղաքակրթութիւն՝ բանալով զմիտս նոցա ընդունել զլաւն և խորշիլ ի վատէն: Զգո՛յշ, զգո՛յշ, ջանացէք միշտ ի չինել, զի այս է Ձեր սեպուհ պարտիք:

Ողջոյն Ձեզ, յօրինիչ մատենագիրք և թարգմանիչք գրոց ի զանազան լեզուաց հեղինակութեանց, զորս օգտակար համարիք բարոյական կրթութեան և ձեռնտու արուեստին գիտութեան:

Ողջոյն ձեզ բարերար Մեկենասք, որ քաջալերելով զգրասէր աշխատաւոր մշակն՝ ի լոյս հանէք զնորա վաստակն և ընծայէք ազգին, որով ճոխանան և հարստանան աղքատիկ մատենադարանք Հայոց:

Ողջոյն Ձեզ, նախանձաւոր սուրբ Կրօնի, եկեղեցասէր ժողովրդասէր բարեպաշտ Ոգիք, որ շինէք զեկեղեցիս և դպրանոցս հաստատելով և պահելով կրօնի և ուսման տաճարս, որով լուսաւորին որդիք եկեղեցւոյ և ժողովուրդն յորդորի յԱստուածպաշտութիւն, որ քան զամենայն ինչ զօրաւոր է:

Ողջոյն Ձեզ, ուսանող մանկունք և օրիորդք, եղբարք և քորք որ ձեռն ի ձեռն տուեալ ի միասին երթայք և գայք ի կրթութեան տաճարն, բարեբաստիկ և երջանիկ էք, եթէ հաւասար կրթութեամբ պատահեալ միմեանց ձեռն տայք յաւուր պսակադրութեան Ձերոյ ի սուրբ ամուսնութիւն:

Ողջոյն Ձեզ, Մայրաքաղաքացիք և գաւառական քաղաքացիք, որ պարապիք ի ձեռակերտ արուեստս և ի շահավաճառութիւնս, որ աշխատիք յառաջ վարել զգործս Ձեր իմաստուն տնտեսութեամբ և ճարտարագիտութեամբ, միշտ մրցելով

և զարգանալով ըստ պահանջման ժամանակին.

Ողջոյն Ձեզ, բնակիչք դաշտաց և լերանց հինական երկրագործ ժողովուրդ, որ սիրէք զհողն և մամ, զոչխարն և տաւար, դուք աշխարհի բարի և անխարդախ վաստակին աշխատաւոր մշակն էք, դուք հարազատ որդիք էք նախահօր մերում. դործեցէք զերկիր և պահեցէք, գիտնալով թէ միայն երկիրն է Ձեր կեանք և զօրութիւն, միշտ չանացէք անկորուստ պահել զայդ հայրենաւոր ժառանգութիւն։

Յետ ողջունելոյ Ձամենայն դասակարգս Ձեր, ժողովուրդ Հայոց, դառնամ արդ պատմել ձեզ թէ զինչ արար Տէր ընդ իս և գիտէք արդէն զի հռչակեցաւ ընդ ամենայն աշխարհ։

Ո՛չ որպէս կամին մարդիկ, այնպէս առնէ Տէր, այլ որպէս ինքն կամի և ո՞վ կարէ հասու լինել անքնին խորհրդոց նորա. զի ո՞ գիտաց զմիտս Տեառն և ո՞ եղեւ նմա խորհրդակից թէ խելամուտ արասցէ զնա։

Մինչ փոքրիկ և կրտսեր էի ի մէջ եղբարց և արածէի զիմ փոքրիկ հօտն ի լեառն Վարագայ, առ հովանեաւ Քրիստոսի Աւագ սուրբ Նշանին, Ձեռն Տեառն կալաւ զիս, ած յԵրուսաղէմ և կացոյց ի վերայ լերինն Սիօնի, ուր երևեցաւ Բանն բժիշկ մարդկութեան և վերանորոգիչ հընացեալ մարդոյն։

Յերեսուն ամաց անտի մինչև ցեօթարնասուն ամն իբրեւ խեցեղէն մի տկար անօթ միշտ վարեալ և գլորեալ ընդ քարքարուտ ելևէջ առապարս աշխարհի, այնպէս եղէ զի կարծեցին մարդիկ թէ ի սպառ ջախջախեցայ. և զի՞նչ էր որ կենդանի պահէր զիս. միայն հեզութիւն և ի սպառ համբերութիւն։

Անդ ի Սիօն մօտ էր նորոգիչ բրուտն Յիսուս, որ անդրէն վերստին նորոգեց զլեկեալ անօթս։ Միանգամ և երկիցս հիւանդացայ յոյժ, այնպէս թուեցաւ ինձ թէ հասեալ կամ առ դուռն գերեզմանին, և եղէ ես որպէս զոստայն մերձ ի հատանիլ, սիրտ իմ և չունչ գելաւ յիս, լացի և գոչեցի. ով Տէր դեռ տարաժամ է, ասացի, դեռ բազմապատիկ պարտս ունիմ առ Քեզ և առ եկեղեցին, թոյլտուր, դարձո՛ զոգի իմ զի կեցից և վճարեցից։ Ո՛հ, թէ մեռանիմ չմնամ պարտապան առաջի Քո ահաւոր ատեանիդ։

Լուաւ ինձ Տէր և ողորմեցաւ և յաւել ինձ նոր կեանս, վերացոյց ի լեռնէն Սիօնի, եդ ի Սիօն Այրարատայ՝ ի կաթուղիկէ Էջմիածին և ասաց. Որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ տանդ Հայոց և հովիւ վարատեալ հօտին սուրբ Գրիգորի։ Ահա քեզ ժամ և ժամանակ, երթ վճարեա զպարտս քո։

Խոնարհելով առաջի երկնի Հօր կամաց և մեծարելով զհամազգային միաձայն ընտրութիւնն, ահաւասիկ գամ ի վճարել զմնացորդ նուիրական պարտս իմ, զոր ունիմ առ եկեղեցին Հայաստանեայց և առ ժողովուրդ Հայոց և գիտէ՞ք թէ քանի՛ չատ բազմապիսի և բազմապատիկ են չափ և կշիռ պարտուցս։

Այլ ես մինչ հասեալ կամ ի ծերութիւն և անցեալ զեօթանասուն ամն, մինչ ձեռս ի վեր կալեալ այլքն ածեն ինձ գոտի, ի՞ւ կարացից վճարել զայնչափ պարտս գոնէ փոքրամասն տաղանդին չափով, զոր ինձ աւանդեալ է Տէրն և պահանջէ չահագործել տոկոսիւք և պարզերես կալ առաջի պահանջողին։

Մինչ խոկամ, զարհուրիմ ես, ո՛վ եկեղեցի Հայաստանեայց, որ ընդ ամենայն հեռաւոր աշխարհս սփռեալ կաս տարագրեալ ի հայրենի քո տանէն. չգիտեմ թէ ո՞րպէս կարեմ վարել զհովուական տեսչութիւն իմ։ Մինթէ նստեալ յԱյրարատ մինչ ի Հնդիկս և յԵւրոպ և այլ հեռավայրս զօրե՞մ տեսանել գձեզ։ Եւ զի՞նչ հնար է ինձ արածել զհօտն սեփհական, որ ընդ ամենայն աշխարհս ցիր և ցան կան, անտես աչաց իմոց և ուր չկարեն հասանել ոտք այցելութեան իմոյ։

Այո՛, առաքեցայ ես ի լեռնէն Զիթենեաց՝ այլ չեմ ազատ առաքեալ՝ շրջել ոչ ի հեթանոս, այլ յամենայն եկեղեցիս Հայոց կենդանի բարբառով քարոզել և ուսուցանել, աչօք իսկ տեսանել զցաւս հօտին իմոյ և հոգալ զդարմանն։ Այլ զինչ իցէ մարդոյն դարման։ Իցէ՛ թէ գթած Սամարացին անցանէր զքեզ։

Ուստի մնայ ինձ միայն, ըստ նախնի սովորութեան հօտաւէր հովուաց՝ Ընդհանրական գրով և թղթով խօսիլ ընդ ձեզ, ժողովուրդ Հայոց, թէ յերկրի աստ մինչչեւ մեռեալ իցեմ և թէ յերկինս, զի և անդ կենդանի եմ հոգւով, ուր հոգիք մեր նախնի սուրբ Հարց կան և աղօթեն վասն ձեր։

Այլ ունիմ ես աչս, որ մօտ են և տեսանեն զՁեզ, նոքա են իմ ընտրելակից եղբարք Հովիւք և Առաջնորդք ամենայն վիճակաց, որոց յանձենալ է, ոչ յինէն այլ ի Քրիստոսէ, հովուել և յանձանձել, պահել և հաստատել ի հաւատս Առաքելական Եկեղեցւոյն Հայաստանեայց, որոյ հիմն Թադէոս և Բարդուղիմէոս եդին և զողջ շինուածն ած ի կատար հրաշալի նահատակութեամբ սուրբ Գրիգորիոսաւորիչն։

Գիտէք իսկ և հոչակեցաւ թէ յաւուր հանդիսի օծման մերում առաջի Իշման սուրբ Տաճարին ուխտեցի հաւատարիմ մնալ առ այդ հիմն և շինուածն առաքելական եկեղեցւոյս Հայաստանեայց և պինդ պահել գաւանդութիւնս մեր նախնի սուրբ Հարց, զգուշանալ չխրամատել զցանկն հայրենի։

Եւ դուք իսկ ուխտակից էք ընդ իս և զնոյն ուխտն ունիք ի ձեռնադրութենէ շնորհաց, անարատ և անաղարտ պահել զկնիքն, որ աւանդեալ է մեզ ի Քրիստոսէ, յԱռաքելոց և ի սրբազան Հայրապետաց։

Ուստի կայ և մնայ մեզ ամենեցուն երկիւղածութեամբ ծառայել առաջի Տեառն, զի ունիմք մեք իւրաքանչիւր զմեծ պատասխանատուութիւն ըստ աստիճանի և շնորհաց, որ տուեալք են ի Հոգւոյն պաշտել զեկեղեցիս, հոգալ վասն եկեղեցւոյն և եթէ յաշխարհի աստ պատրաստի և առաջի մեր Քրիստոսի խաչ, յօժարութեամբ կրել և երթալ զհետ ցօրագլխոյն, որ ասաց. «որ ոչ առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ, չէ ինձ արժանի» Շնորհ մեծ է մեզ, եթէ սիրով և համբերութեամբ կրիցեմք զնոյն խաչ։

Աղօթեցէք վասն իմ, ո՛վ գործակից հոգեւոր իմ Եղբարք, զի գիտէք թէ խաչն իմ ծանրագոյն է, զոր եդ ի վերայ թիկանց իմոց Եկեղեցին Հայաստանեայց։ Այլ թէ գուք զօրավիգ լինիջիք ինձ, որպիսեօք Սիմէօն Կիւրենացին, ես յայնժամ զօրացեալ ի Հոգւոյն, բարձեալ զխաչն սիրով ածեմ ի կատար գողգոթային։

Եւ ես աղօթեմ վասն ձեր, զի և դուք զնոյն խաչն համբերատար սիրով բարձեալ երթիջիք զհետ խաչեալ Փրկչին մերոյ, զի անհնարին է մեզ խուսափել ի խաչէն, քանզի ասաց Յիսուս. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք։ Եւ զի՛նչ իցէ նեղութիւն մեր առ նեղութիւն նահատակ նախնեացն։

Իսկ դու Եկեղեցի և ժողովուրդ Հայոց. որ ընտրեցիք զիս հովիւ ձեզ, ես ապաստան լինիմ աղօթից Ձերոց և հաւատամ թէ լսէ Տէր աղաչանաց Ձերոց և պահէ զիս վասն սիրելի եկեղեցւոյն իւրոյ։ Կեցից ես վասն ձեր և դուք վասն Քրիստոսի։ Ամէն։

Գրեցաւ անդրանիկ Կոնդակս օրհնութեան ի 15 Դեկտ. 1893 ամի Փրրչական և ըստ տոմարիս ՌՃԽԳ ի Մայր Աթոռս Հայաստանեայց ի սուրբ Էջմիածին, ի Վաղարշապատ։

ԱՐՏԱՔԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Թէև Ամերիկայի Միացեալ Նահանգք հեռու են Թուրքիայէն և՝ իրենց աւանդական քաղաքականութեան համաձայն՝ կը խորշին Եւրոպիոյ միջազգային խնդրոց միջամուխ լինելէ, սակայն մասնաւոր պարագայից բերմամբ ստիպուած են որոշ կացք և ընթացք մի ունենալ հայկական խնդրոյն վերաբերութեամբ։

Ամերիկայի կառավարութիւնն միջազգային քաղաքականութեան մէջ քիչ անգամ ճարտարութեան ապացոյց տուած է կարծեմք։ Այսօր ահագին Ամերիկան չի կրնար ներկայացուցանել աշխարհի ճշմարիտ քաղաքագէտ կամ պետական մեծ մարդ մի. և անոնք որ նախագահութեան և այլ պէսպէս պաշտօններու կը հասնին, չեն այս երկրին իմաստնագոյն և լաւագոյն զաւակներն։ Այս իրողութիւններ բացատրելու տեղ չկայ այս անձուկ էջերու մէջ, ուստի անցնիմք միայն ակնարկած լինելով։

Ամերիկայի կառավարութիւնն և ժողովուրդն Հայկական Խնդրոյն և Թրքաց վերայ տեղեկութեան երեք աղբիւրներ ունին. (1) Թղթակիցք, ուղեւորք և լրագրեր. (2) Միսիոնարք. (3) Դեսպանք և պաշտօնական հաղորդակցութիւնք։

ԹՂԹԱԿԻՑՔ

պատահական են միայն։ Ամերիկայի մեծ

թերթերն Թուրքիոյ մէջ յատուկ թղթակից չունին: Ամերիկայի թերթերուն մէջ երեւցած յօդուածներն ու լուրերն ընդհանրապէս եւրոպական ճամբով անուղղակի կը ստացուին և համառօտ կրկնութիւնք են Եւրոպիոյ մէջ հրատարակուածներուն:

ՄԻՍԻՈՆԱՐՔ

Թուրքիայէն յաճախ կը գրեն այս երկրին կրօնական թերթերուն: «Միշընէրի Հէրըլտ» կոչուած ամսաթերթն ինքնին աւելի քան կէս դարէ ի վեր հրատարակած է այնքան թղթակցութիւններ որ ստուար հատորներ կրնան լնուլ: «Աուտլուք», «Ինտիփէնտէնթ» և այլ շաբաթաթերթք ալ ստէպ ունին միսիոնարական թղթեր Տաճկաստանի այլ և այլ կողմերէն: Պատուելիք ի հարկէ կրօնական, առաքելական խնդրովք կը զբաղին և կը զբաղեցունեն իրենց ընթերցողներն, բայց վերջին տարիներս, Թուրքիոյ յուզմանց բերմամբ, Հայկական Խնդիրն ևս շատ անգամ կը խառնեն իրենց խնդիրներուն:

Միսիոնարներն իբրեւ ճշմարիտ Ամերիկացի, և հետեւապէս իբրեւ գործի մարդիկ, Հայկական և այլ ամեն քաղաքական խնդիր կը նկատեն իրենց գործի տեսակէտէն, և յիրաւի չէինք կրնար սպասել որ նոքա զգային ինչ որ մեք հայերս կը զգամք, և խորհէին իբրեւ հայ: 1830էն մինչև 1850, երբ առաջին միսիոնարներն լոկ կրօնական խնդիրն ունէին անխառն ու պարզ իրենց առջեւ, չյաջողեցան տեսնել ու գործել խորին թափանցողութեամբ և շատ թիւր ուղղութեան հետեւեցան— որպէս այլուր երկարօրէն ցուցած եմք*,— այժմ որ քաղաքական կնճիռներ աւելցած են, չեմք ակնկալեր որ բարձրախոհ քաղաքագիտի տեսութիւն և ընթացք ունենան: Բացառութիւններ կան և մեք անոնցմէ մին անձամբ ճանաչելու մխիթարութիւնն ունեցած եմք, բայց ընդհանրապէս խօսելով՝ կարող եմք պնդել թէ միսիոնարք ոչ Թուրքն և ոչ Հայն քաջ կը ճանաչեն և իրենց կացքն հանդէպ Հայկական Խնդրոյն բաւական քննադատելի է:

Քննադատելի են, բայց ոչ ամենն մի և նոյն չափով: միսիոնարաց ամենն ալ իրենց գործի տեսակէտէն կը նային Հայկ. Խնդրոյն, բայց և այնպէս ամենուն կարծիքն և զգացումն բոլորովին նոյն չէ: Միսիոնար կայ որ հայասէր է, կայ ևս որ թրքասէր է մանաւանդ. ոմն լաւ համարում ունի Հայոց վերայ, և ոմն Թրքաց վերայ: Թրքախօս միսիոնարք մեծ մասամբ Թրքասէր ալ են, կամ թէ բաւական Հայասէր չեն. և այս դիւրին կը բացատրուի: Խարբերդու միսիոնարաց մէջ կայ Հայախօս Պարդըն, որ շատ աւելի համակիր է Հայոց քան զնոյն քաղաքի Թրքախօս Պարնըմ, որ մեր մէջ տխուր անուն հանած է իւր անպատեհ յօդուածներով Հայկ. Խնդրոյն վերայ: Ցարգելի Պարնըմի վերջին յօդուածն երեւեցաւ փետր. 15ին «Պոսթըն Հէրըլտ»ի մէջ, յորում կան մի քանի ուղիղ խօսքերու հետ խառնուած նաև այլանդակ սխալներ, որք կրնային թշնամական իսկ համարուիլ եթէ տգիտութեան և անհոգութեան չընծայուէին: Օրինակի համար, Պատուելին կ'ասէ թէ «Հայոց ստուար մեծամասնութիւնն կարդալ գրել չգիտէ, և հազիւ պատրաստ է ինքնավարութեան, մինչև իսկ եթէ Հայաստան զատ երկիր մի լինէր և զուտ հայաբնակ: Գանք որ Հայք չեն կազմեր աւելի քան մէկ չորրորդն անոր բնակչաց:» Յօդուածագիրն ի՞նչ վիճակագրութեան կը յենու Հայաստանի բնակչաց մէկ չորրորդն միայն Հայ հաշուելու. մի մոլեռանդ Թուրք չէր կարող աւելի գէշ խօսիլ: Իսկ ինքնավարութեան մասին ինչո՞ւ չի մտածեր թէ Պուլկարք նուազ դաստիարակուած էին քան զՀայս երբ ինքնավար եղան: Մարդ դժուար կրնայ կարդալ այդպիսի յօդուածներ առանց սրտմտելու:

Դժբաղդաբար, Հայասէր և ազատասէր եղող բացառիկ միսիոնարներն չեն գրեր, զի գիտեն թէ ոչ Թուրք կառավարութեան և ոչ իրենց եղբայրակիցներուն հաճելի կը լինին, և գուցէ կրօնական թերթերն մերժէին իսկ հրատարակել այդպիսեաց յօդուածներն.

ԴԵՍՊԱՆՔ

պաշտօնական տեղեկութեանց աղբիւր են՝ Ամերիկեան դեսպանք ի Կ. Պոլիս, մանաւանդ Սուլթան Համիտի օրով, աւելի կամ նուազ ենթարկուած են թրքական ազդեցութեանց և փատիշահին մեծարանքն ու այլ հաճոյակատարութիւններն բոլորովին

*Տես «Հայ Բողոքականութեան Անցեալն ու Ապագայն»

անձնատուր արած են զիրենք։ Հանգուցեալ Ֆօքս շատ թրքասէր մարդ էր, և այժմու դեսպանն Տէր Թէրէլ տխրահռչակ է արդէն իւր թոյլ քաղաքականութեամբ։ Դիւրին չէ գիտնալ թէ Ուօշինկթընի կառավարութիւնն իւր թրքասէր քաղաքականութիւն ինչ չափով հիմնած է Թէրէլի տեղեկագրութեանց վերայ և ի՛նչ չափով օսմ. դեսպան Տէր Մավրոյէնիի ասից վերայ։ Սաչափն յայտնի է թէ Թէրէլ իւր պաշտօնին համաբերձ մի մարդ չէ, և թէ Մավրոյէնի յոյժ հաւատարիմ գործիչ մ'է Սուլթանին, և մեր խնդրոյն տը խուր կողմն չափազանց սեաւ գունով ներկայացուցեր է պետական քարտուղար Կրէշէմի։

Տէր Կրէշէմ դեսպանական տեղեկութիւններէ այնքան աւելի դիւրաւ կրնայ մոլորիլ և Թրքաց նպաստաւոր քաղաքականութիւն մի ընդդրկել որքան արդէն կը խորշի միջազգային կնճիռներէ՝ հետեւելով աւանդական ձեռնպահիկ քաղաքականութեան։

Նիու Եորքի «Թայմզ» լրագիրն Փեբր. 15ին խմբագրական մի հրատարակեց «The Armenian Question» (Հայկական Խնդիրն) խորագրով, որ թէև պաշտօնական հանգամանք չունի, թուի թէ Ուօշինկթընի կառավարութեան տրամաբանելու կերպն բաւական հաւատարմութեամբ կը ներկայացունէ։ Այդ նշանաւոր յօդուածի միտքն սապէս կը բովանդակեմք—

Զեմք մոռնար թուրք պաշտօնէից անիրաւութիւններն ընդդէմ Հայոց, չեմք ուրանար Քրդաց խժդժութիւնքն որք անպատիժ կը մնան, և ոչ ալ անգէտ եմք թէ որքան կը ճգնի Դուռն խոչընդոտնել մեր միսիոնարաց գործունէութիւնն։ Եւ սակայն հայ յեղափոխական կոչուած խմբին ընթացքին չեմք համակրիր, նոքա մարդասպանութիւն և յափշտակութիւն կը գործեն. և ճիշդ այդպիսի յեղափոխականներու հետ հաղորդակցութիւն ունին Հայեր Ամերիկայի մէջ, ու զայնս իբրեւ մարտիրոս ու դիւցազն կը տօնեն։ Այս պարագայից մէջ թուրք կառավարութիւնն կը դիմէ մեր կառավարութեան և աջակցութիւնն կը խնդրէ։ Նա չասեր թէ ամերիկացի եղած ամեն Հայ այդ դասուն կը վերաբերի, և սակայն քանի որ դժուար է զանազանելզայնս, կ'ուզէ ամենն ալ հնոռու պահել մինչև որ ներկայ ճգնաժամն անցնի։

Թերթն սա եզրակացութեան կուգայ «Արդ, կ'ասէ, այս երկրի մէջ գըտնուող Հայերուն կը մնայ ցուցնել պարզապէս թէ իրենք համամիտ և համակիր չեն այն մարդոց որք սպանութիւն և բռնութիւն կը տանին Թուրքիոյ ներքին քաղաքներն ու գիւղերն։ Թոյլ լուծեն Հնչակեան կուսակցութիւնն և վերջ տան նմանօրինակ շարժմանց, և այն ատեն պիտի տեսնեն թէ ամեն դասու Ամերիկացիներ լրջօրէն պիտի աջակցին իրենց՝ տառապեալ Հայոց վիճակն բարւոքելու համար։»

«Թայմզ»ի յօդուածն երկար է, և շատ սխալներ կը պարունակէ իբրեւ օտարականի գրուած։ Կ'արժէ որ կարող ոք պատասխան մի տայ։... և նշանակէ բոլոր սխալ տեղեկութիւններն ու մանաւանդ սխալ տրամաբանութիւնն։ Դուռն չէ կարողզանազանել եղեր խռովարարներն խաղաղասէր հայ-ամերիկացիներէն, ուրեմն ամենն ալ կը մերժէ.— ի՛նչ անիրաւութիւն. ինչո՞ւ անմեղն ալ գրկել մեղաւորին հետ. այդ ի՞նչ տեսակ արդարութիւն է. և միթէ կառավարութեանց պարաքն չէ՞ միշտ անմեղն մեղաւորէն զանազանել։ Ի՞նչ սոսկալի չարամտութիւն է ոչ-ամերիկացի մի քանի յեղափոխականաց գործն խափանելու պատրուակաւ խաղաղ ամերիկացիներու մուտքն ի Թուրքիա արգելլուլ. եւ ի՞նչպէս կրնայ Ամերիկայի կառավարութիւնն այդ ապուշ և անիրաւ քաղաքականութեան համակերպելու անպատուաբեր խոնարհութիւնն յանձն առնուլ։ Թողուն՝ սակայն այդ յօդուածի և այդ քաղաքականութեան դէմ ասելիքներն որք շատ ու շատ են։ Այս տեղ մեր ուշադրութեան արժանի գլխաւոր կէտն այն է թէ Ամերիկացւոց մէջ շատեր «Թայմզ»ի հետ կը վարանին մեզ օգնելու՝ գայթակղած լինելով մեր յեղափոխականաց ոմանց գործելու կերպէն։ Կարելի է «Թայմզ»ի պատասխանել թէ միթէ արժա՞ն է պահանջել որ նոր արթնցած ժողովրդի մի մէջ գործողներուն ամենն ալ մեծ իմաստութեամբ շարժին, կամ թէ անյարմար առաջնորդներու հետեւող պարզամիտներ բնաւ չգտնուին։ Ո՞ր ժողովուրդ սխալներ գործած չէ այսպիսի ճգնաժամուց մէջ։ Միթէ ազնուութի՞ւն է պահանջել որ ժողովուրդ մի կատարելապէս բանիմաց և ամբողջովին լուսամիտ լինի՝ օտարաց համակրութեան և օգնութեան արժանի համարուելու համար։

Բարերաղդաբար ամեն՝ Ամերիկացի

խմբագիր Թայմզի պէս չի խորհիր. թերթից մեծ մասն մեզ հետ են պարսաւելու համար Կրէչէմի ընթացքն։

Հայ Ամերիկացւոցս պարտքն է աշխատիլ մամլոյ մէջ տեսնուած սխալներն ուղղել, երբէք չհրատարակել չափազանցեալ լուրեր, ջանալ քաղցր բանիւք լուսաւորել միւիոնարաց տեսութիւնն, մեր հրատարակութեանց մէջ չգործածել վիրաւորիչ լեզու ընդդէմ Նախագահին, այլ ջանալ իրաց ճիշդ վիճակն ներկայացուցանել։

Ուրիշ մեծ պարտաւորութիւն մ'ալ կայ դեռ։ Միայն յօդուած գրել կամ անգլիերէն ու ֆռանսերէն լեզուներով Հայոց ցաւերն հռչակել բաւական չէ։ Ուրիշ անգամներ ասած եմք թէ այդ մեր գործոյն դիւրին մասն է։ Հետ զհետէ աւելի կը տեսնուի թէ արդարեւ աւելի դժուարինն ներքին գործն է։ Ահա Եւրոպա և Ամերիկա համոզուած են թէ Թուրքն խուժ է և Քիւրդն դուժ, և թէ Հայոց տառապանքն ի ձեռս նոցա անտանելի է։ Զայս կ'ընդունին իրագեկ օտարականք, և սակայն մեզ համակրելու և օգնելու կը վարանին. այս վարանում լոկ անմարդասիրութեան ընծայելի չէ։ Նոցա միտք չփոթած է մեր գործիչներու ընթացքին նկատմամբ։ Ռուսիա, Անգլիա, Ֆռանսա, Ամերիկայ Համենայն մեծ պետութիւնք, չեն նայիր միայն թէ ինչքան կարօտ եմք բարեկարգութեան կամ ինքնօրինութեան, այլ և ինչպիսի միջոցներով, որպիսի ընթացիւք կը ձգտիմք մեր բաղձանաց իրագործման։ Արդար պահանջք իսկ անարդար միջոցներու շնորհիւ կրնան վտանգուիլ և տարբեր գոյն առնուլ։ Իբրեւ խակ ժողովուրդ կրնայինք ցարդ մեր առաջին խլրտմանց մէջ սխալներ գործած լինիլ, բայց ալ ժամանակ է որ աւելի լուրջ և լուսամիտ եղանակօք փնտռեմք ազատիւնն։ Մեր սիրեցեալ Հնչակեան եղբարց ուշադրութիւնն կը հրաւիրեմք այս կետի վերայ։

Ներքին ու արտաքին քաղաքականութիւն, ինչպէս կը տեսնեն ընթերցողք, սերտ կապակցութիւն ունին իրարու հետ, և պէտք է որ ներդաշնակութեան բերուին այնպիսի բարձր մարմնոյ մի ձեռաց մէջ որ վարէ թէ' ներքինն և թէ' զարտաքինն։

ՊՈԼՍԱՀԱՆ ՆԱՄԱՀԱՆԻ

ԱՆԵՐԵՒՈՒԹԷՆ

ՆԱՄԱԿ Բ.

ՑԱՂԱԳՍ ԶԱՐՄԱՆԱԼԵԱՑ

Բարեկամ,

Դուք Ամերիկացիքդ զարմանալի մարդիկ էք, և միշտ զարմանալի բաներ լսել կ'ուզէք։ Եթէ ձեզ հաղորդեմ կարեւոր լուրեր, գոհ չէք լինիր։ Ի՞նչ կուզէք. կ'ուզէ՞ք արդեօք որ ասեմ թէ մայրաքաղաքիս մէջ ԿՈՑՐ ՄԱՐԴ մի կայ որ տասն հազար աչք ունի։ Կուզէ՞ք որ ասեմ թէ տեսայ ես եօթն ամեհի առիւծներ որք հիւանդ կատու մի փարատել չզիջանելով՝ կը լիզէին իբր թէ զայն բժշկելու համար, և որքան կը լիզէին այնքան աւելի կ'ուռէր ցաւագար կատուն։ Կ'ուզէ՞ք որ ասեմ թէ զՑովնան կուլ տուող ձկան բազմաթիւ սերունդներն մեր ջրերու մէջ կ'երևին և անցեալ օր անոնցմէ մէկուն փորին մէջ գտնուած են մի քանի Հայեր, որք բանտէն ի ծով նետուած էին և ձկան մէջ ապաստան գտած։ Փաստիշահն հրաման հանած է որ այսուհետև ձկունք չըկարենան երթևեկել Սև ծովու, Պոսֆորի և Տարտանելի մէջ առանց կանոնաւոր անցագրի...

Ալ պիտի խղճա՞ք մեր վերայ, ո՛ Ամերիկացիք, որ զարմանալով կը զարմանաք թէ մեք ի՞նչպէս չեմք ձանձրանար կեանքէ, մեք որ զարմանալի բաներ չեմք տեսներ ու լսեր։

Հասկացա՞ք այժմ թէ մեք ինչո՞ւ անձնասպանութեան չեմք դիմեր՝ կեանքէ ձանձրացած։ Սքանչելի երևոյթներ, ամեհի, վիթխարի բաներ կը տեսնեմք մեք, և մեր օրերն զարհուրելի գրօսանքներով կ'անցուցնեմք։

Իբր նմոյշ տուի ձեզ մայրաքաղաքիս մայր լուրերէն, և այժմ ալ պիտի տամ մանուկ լուրերէն, եթէ կը հաճիք։

Ճիշդ չգիտեմ, բայց կը կարծուի թէ իբր 5,000 լրտեսներ կան այս մեր երանութեան Դրան մէջ։ Կան նաև լրտեսներու լրտեսներ։ Լրտեսներ կը ծառայեն իբրև աչք այնմ՝ որ ամեն ինչ տեսնել կ'ուզէ, և իբրև ականջ այնմ՝ որ ամեն ինչ լսել կ'ուզէ։

Այդ կը հասկանաք։ Իսկ լրտեսներու լրտեսնե՞րն առ ի՛նչ կը ծառայեն։ Ի հարկէ կրնաք մտածել թէ նոքա ալ լրտեսներն կը լրտեսեն։ Այդ արդէն կը նշանակէ թէ լրտեսք վստահելի չեն. թէ Գլուխն կաս կածանօք կ'ընդունի այդ բիւր աչերու տեսութիւնն, և տեսութիւնն յստակելու համար ուրիշ աչօք ևս նոյնն տեսնել կ'ուզէ։ Արդիւնքն կը լինի շփոթութիւն, կրկնատեսութիւն, հաւակուրութիւն և վերջապէս կատարեալ կուրութիւն։ Ամենատես լինել ուզողն այսպէս կոյր կը լինի, և ամենալուրն՝ խուլ։ Աստուած լինել ձգտողն՝ մարդկութենէ ալ կ'իյնայ։

Եթէ գլխացաւութիւն չէ ձեզի, փոքր լուր մ'ալ լսեցէք։ Ուղևոր մի, գաւառէն նոր հասած, առիթ ունեցաւ ոստիկանին հարցնելու թէ ի՛նչ չէնք է այն ինչ փառաւոր չէնքն։ Ոստիկանն այդ հարցման պատասխանելու համար երկու ձեռքերն խողովակի ձևով դրաւ ուղևորի ականջին և շշնջեց «Փաշիշահ էֆենտիմիզն սէրայը սբը» (Մեր թագաւոր տեառն արքունիքն է։) Ուղևորն զարմանք յայտնեց որ ոստիկանն այդպիսի անմեղ պատասխան մի այդքան զգուշութեամբ կը շշնչէ, և ոստիկանն բացատրեց առաւելագոյն զգուշութեամբ, թէ Փաշիշահի անունն արտասանել թէև արգիլուած չէ, վտանգաւոր է, և թէ հրամայուած է «էֆէնտիմիզ» տիտղոսն կցել այդ բառին։

ՆԱՄԱԿ ԵՒԼԹԻՆ

Յունուար 1894

Ախլաթ Բաղէշի Կուսակալութեան մէջ երեսուն գիւղերէ բաղկացեալ գաւառ մի է։ Յաղագս գանգան դժուարութեանց գրեթէ անկարելի է տեղեկութիւններ յղել յարտասահման։ Սոյն դժուարութեանց մեծագոյնն է թղթատարական անկանոնութիւն. ատի նամակներ կը տարուին Բաղէշ փոստայի յանձնելու վասն։ Սակայն կարելի՞ է մինթէ նամակ տանիլ Բաղէշ քանի որ իւրաքանչիւր կէս ժամ ճամբու վերայ դէտ կանգնած կայ զճամբորդս խուզարկելու։ Վայ այնմ որոյ քով մի գրուած թղթի կտոր գտնուի, թրքական բանտի խորերն ննջելու բաղդին կարժանանայ, հոգ չէ եթէ թուղթն անարժէք բան մ'իսկ լինի։ Ահա այսպէս բանտարկուած են այն հազարաւոր հայոց մեծ մասն որք այսօր թուրքիոյ զանազան բանտերու մէջ կը նեղուին։

Բաղէշ կուսակալն ընկերանալով թուրք միլիթէզիմներու Ախլաթցի հայու հետ կիսեց եկամուտն որպէս երկու եղբարք կը կիսեն ժառանգութիւն մի։

Իցէ թէ մնացեալ կէսն հայն կրնար ժառանգել. զայն ևս Սուլթանի մնացեալ սիրելի որդիք, Քուրդերն յափշտակեցին։ Արդ մի զարմանար որ սով կայ այնքան սաստիկ որ կամովին կին մը իւր չորս զաւակօք Ծղակ կը գնայ և մին ի զաւակաց հարիւր դահեկանի կը ծախէ միւս երեքն մի քանի օր ևս ապրեցուցնելու համար։

Ծղակ գիւղ որ 1880ի սովի ատեն Վան Բշերիկ գաւառներուն հաց կուտար, այսօր ամենայետին ադքատութեան մէջ է։ Փրխուս, 200 տուն հայ գիւղ մ'է, սովի պատճառաւ բնակչաց կէսն իբր մուրացիկ կը շրջին ատ անդ։

Թեղուտ, 250 տուն նմանապէս հայ, ոչինչ ունին ուտելիք՝ շողգամէն ի զատ։ Ասոնք են հարուստ գիւղերն գաւառիս մէջ. երևակայէ ուրեմն զմնացեալս։

Բուլանըգ, որ հայկական գաւառաց պտղաբերագոյնն է, նոյն պատճառներով սովէն կը տանջուի։ Միայն մէկ օրինակ յիշեմ. Եօնճալի՝ Բուլանըգի ամենահարուստ գիւղն համարուած է, սակայն այժմ մէկ տուն կայ որ ուտելու հայ աւնի։ Հայ գիւղացին մէկին մէկ շահով դրամ կը փնտռէ կտռավարութեան տուրքն վճարելու՝ իւր փորն կշտացնելէն առաջ, բայց ո՞վ է ստակ տուող։

Հայաստան կը պարպուի, գաղթելու ոգին օր ըստ օրէ կը զօրանայ. գաղթելէն զատ ի՞նչ կարողէ անել ժողովուրդ մը այսքան ճնշման տակ և անպատսպար ու անպաշտպան։

ՆԷԲՐՈՎԴ

ՄՈՆԴԷՍԲԻԷՕԻ ՆԱԽԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՆ ՕՍՄ. ԿԱՑՍՐՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

3 Փետր. 1894, Բարիզ

Խմբագիր Տէր.

ՄՕՆԹԷՍԲԻԷՕ գաղիացի մեծ մատենագրի անունն բազմաց արդէն ծանօթ

ԸԼԼալ կը կարծեմ։

Անցեալներ երբ դիպուածաւ կը թըղթատէի իւր երկերէն մին «Պարսիկ Նամանին», խիստ հետաքրքրաշարժ մի նամակի պատահեցայ. զոր փուլթացի բառական ճշտութեամբ թարգմանելով ձեզ յղել, յուսալով թէ կը հաճիք գետեղել ձեր արդիւնաշատ և աղդօգուտ թերթի մի անկիւնն։

Ինչպէս յայտնի է Մոնթէսքիէօ ապրած է 1689 թուէն մինչեւ 1755, և յետագայ նամակն գրած 1711 թուականին։

Հեղինակն հետեւեալ եղանակաւ կը սկսի իւր նամակն։

«Ութը օրեր միայն Թոգաթ մնալով. 35 օրուան ճանապարհէ մը վերջ Զմիւռնիա հասանք։

«Թոգաթէ ի Զմիւռնիա նշանակութեան արժանի մի միակ քաղաք իսկ գտնել անկարելի է։ Զարմանօք տեսայ Օսմանցւոց կայսրութեան տկարութիւնն։ Սոյն հիւանդ մարմին փոխանակ առողջապահական բառեխտառն և մեղմ պայմաններու՝ կ'ապրի սաստիկ դեղերով որք զինքն ուժաթափ կ'ընեն և կը մաշեն անընդհատ։

Բաւայք, որք իրենց պաշտօններն դրամական մեծամեծ գումարներու զօրութեամբ միայն կը ստանան. թշուառացեալ կը հասնին ի գաւառս և գայնս կը քանդեն, կը կործանեն նուաճեալ երկրաց հանգոյն. լիրբ ոստիկանութիւնն նոցա կամակոր հաճոյից միայն կը հպատակի։

«Պարտպք քանդեալ, քաղաքք անչէն, դաշտք ամայի, մշակութիւն և վաճառականութիւն գլխովին լքեալ։

Անպատժութիւն կը տիրէ սոյն խիստ կառավարութեան մէջ. քրիստոնեայք որք կը մշակեն զերկիր, հրեայք որք հարկահաւաք են, հազար բռնաբարութեանց ենչաւակ են։

Հողատիրութիւնն անստոյգ լինելուն՝ երկիրն արժեքաւոր վիճակի մը մէջ դնելու փափաքն ալ բնականաբար դանդաղցած է. կառավարողաց քմային հաճոյից ընդդիմադրելու համար ոչ օրինական թուղթ և ոչ կանոնաւոր սեփհականատիրութիւն կը զօրէ։

«Սոյն բարբարոսք այն աստիճանի լըքած են արուեստներն, որ նոյն իսկ մէկ կողմ թողած են պատերազմական արուեստը։ Մինչդեռ եւրոպական ազգք կը նրբանան անդադար, սոքա թաղուած կը մնան իրենց հնոտի ագիտութեան մէջ, և նոցա նորանոր գիւտերն իրենց երկիրն ներմուծելու դաղափարն այդ գիւտերու բիւրաւոր անգամներ իրենց դէմ գործածութենէն վերջ միայն կը յղանան։

«Բոլորովին անփարձ ծովու վրայ, բընաւ անվարժ ի դինամարդութեան, կ'ըսուի թէ ապառաժէ եթէ մի քանի քրիստոնեայներ դուրս գան՝ զՕսմանցիս կը քրանցնեն և իրենց կայսրութիւնն կը հոգնեցուցնեն։

«Ինքեանք Անկարող են վաճառականութիւն ընելու, և գրեթէ յակակամայս կը թողուն որ եւրոպացիք, միշտ աշխատասէր և ձեռնարկու, անով զբաղին. կը կարծեն թէ սոյն օտարականաց շնորհք մի ըրած կը լինին եթէ թողուն որ զիրենք հարստացնեն։

«Անցած սոյն երկրի ընդարձակ տարածութեան մէջ, միայն Զմիւռնիան կարելի է նկատել իբր հարուստ և հզոր քաղաք Եւրոպացիք են որ զայն ըրած են այնպէս, և Թրքաց շնորհիւ չէ՛ որ այն ևս միւս բոլոր քաղաքաց չի նմանիր։

«Ահաւասիկ սիրելի Ռ..... ճշգրիտ դաղափար մի սոյն կայսրութեան վրայ որ երկու դար չանցած, աշխարհակալի ուրուն յաղթութեանց թատերաբեմն պիտի ըլլայ։»

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՀԱՅՈՒՀԵԱՑ

ԱՏԵԼՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ԹՐՔԱՑ

9 Փետր. 1894

Շատ սիրեցեալ խմբագիր «Հայք»ի

Ներկայ տարուս. «ՀԱՅՐ»ի 2Դ թիւն ընթերցած պահուս, հանդիպեցայ Բաֆֆի խենթէն քաղուած երկտողին, «Հայ կնոջ զզուանքն դէպի մահմետականութիւնն»։ Սեւելորդ չեմ համարեր հետեւեալ պատմութիւնով ևս առաւել հաստատել զայն։

Զարսանճաղ գաւառի Եփրատ գետի արեւելեան եզերքը կայ Կէօքթէփէ գիւղը, այս գիւղի աղան Ահմաթ 22 տարեկան երիտասարդ, սիրահարում է իւր գիւղին մէջ բնակող Յակոբի աղջկան՝ Ռէհանին։ Այս Բէկը աղայութենէ հետէ հայոց հետ լինելով սովորած էր Հայերէն խօսիլ և

կարդալ։ պահում էր իւր մօտ Աւետարան մը, արդէն նա սիրում էր քիչ մը Քրիստոնէութիւնն։ Աղջիկն առնելու փափաքն ալ աւելնալով՝ ուզեց ծախել իր ինչքը, և գնալ Էջմիածին մկրտուելու, որպէս զի դիւրութեամբ կարողանայ աղջիկն առնել։ Նոյն գաւառի Խարեսիկ գիւղի Օսման Բէկը լսելով եղելութիւնն, կանչում Ահմատին և խորհուրդ է տալիս փախցնել։ Օսման բէկը գրում է Մարխօ գիւղի քուրդ ցեղապետ Վալի աղային որ օգնեն Ահմատին աղջիկն փախցուցնելու։ Մի օր աղջիկն և երկու հարսներ ցորենի հնձոց ժամանակ արտը լինելով, Ահմատը իւր քուրդ օգնականներով յարձակում է և աղջկան առնում է ձիի վրայ։ Հարսներ մանգաղով քաջութեամբ կռուելով յաջողում են մի անգամ ձիէն վար առնել աղջկան։ Կրկին քիւրդք կը խլեն աղջկան և Ահմատի հետ կը տանեն Վալի աղային գիւղն ի Մարխօ։ Աղջիկն նշանուած լինելով, ծնողքն և կեսրանք բողոքում են Բերրի։ այնտեղ ձայներնին չլսուելով, դիմում են Խոզաթ։ Մինչև այս ժամանակ 2 ամիս անցած կը լինի, հագիւ Հայեր իրենց ձայն կառաւարութեան լսելի կ'ընեն և 2։ ամիս աղջիկն Մարխօ մնալով անօգնական՝ Ահմէտէն կը բռնադատուի վերջապէս անձնատուր լինում է այն պայմանով որ իրեն հետ հայերէն խօսի։ Կառավարութիւն նեղել սկսում է Վալի աղային կարծելով թէ քուրդք իրենցմէ ըրած լինին այս բան, Վալի աղան ցոյց է տալիս Օսմանի նամակն և կառաւարութիւնն հանդարտում է։ Այս միջոցին Թուրքք ձայն հանեցին թէ աղջիկն մահմենականութիւն ընդունած է, Հայեր ևս միացած ուզեցին դէմ դնել Թրքայ բռնաբարութեանց և ստութեանց։ Հայեր ուզում էին իրենց դատը տեսնել Խոզաթ, վասնզի Խոզաթի կառաւարիչն աւելի արդարասէր էր, բայց յաջողելով՝ Թուրքք գաղտնի կերպով աղջիկն բերին Մեծկերտ իրենց կողմը բռնող դատարանը, այստեղ Թուրքեր ուզեցին առանձին աղջիկն համոզել մահմետականութիւն ընդունել։ այս բանն անկարելի գտնելով հնարք բանեցնել մտածեցին։ Դատարանի մէջ մէկ անկիւնը վարագոյր մը քաշեցին և ուրիշ Թուրք աղջիկի մը Թրքական քօղով ծածկուած վարագուրի ետևէն կրկնել տուին թէ։ «Ես մահմետական եմ»։ Թուրքք աս պարագային մէջ չահեցան իրենց նէմէհրմութիւնէն, վասն զի իգական սեռին արգիլուած է բացարցակ տղայոց երեսիլ, ո՞ւր կը մնայ այսպէս դատարանի մէջ, և ուստի ոչ ոք կրնար կասկածիլ այս խորամանկութեան վրայ։ Հայեր պատարատէին կռուելու։ բայց երբ այս խոստովանութիւն լսեցին, խաբէութիւնն չգիտնալով Թուլցան, մանաւանդ Թուրքք օրեր առաջ սպառնում էին Հայոց վերայ յարձակիլ։ Այսպէս աղջիկն յանձնուեցաւ Կէօքթէփէ գիւղի Ահմէտ աղային։ այստեղ աղջկան մայրը կարողանում է Ահմէտէն հրաման առնել աղջիկն տեսնելու։ Մայրն իւր գորովալից մայրական սրտով ջախջախուած իւր սիրելիին արկածին վրայ և միանգամայն ամէն հարուածի վրայ աղջկան մահմետականութիւն ընդունելու կսկիծէն զարնուած՝ երբ տեսնում է իւր աղջկան մերկացած քրիստոնէական փառաւոր երեսյթէն և ծածկուած մահմէտական հագուստներով և քօղով, աղջկան վրայ խնալով ուշաթափում է։ աղջիկն ալ չնայելով իւր կրած արկածներին, նրա սիրտն խոցուած էր թէ ինչո՞ւ Հայեր չուզեցին գիս ազատել։ Այս տեսարանը դիտում էր Ահմէտը։ այստեղ մայրը գաղտուկ յայտնեց թէ ինչ՞ու ընդունեցիր մահմետականութիւնն, աղջիկն զարմացաւ այս հարցման վրայ, վասն զի անմեղ էր։ Թրքայ խաբէութիւնն դուրս եկաւ։ Ցեռոյ քննուելով հաստատուեցաւ բանն։ Աղջիկն կասէ՝ եթէ 7 զաւակ ալ ունենամ, տակաւին պիտի աշխատիմ ազատիլ։ աղջիկն լուր կը խրկէ Խարբերդ թէ անոնք որ ցանկանում են Երուսաղէմ գնալ։ թող ինձ ազատելու ջանան աւելի պիտի շահին Աստուծմէ քան Երուսաղէմ գնալով։ Խարբերդի երիտասարդք ուզեցին գնալ, բայց որովհետև բաւական հեռու էր քաղաքէն, պէտք էր անցնէին բէկերի հողէն, գինուած չէին կարող գընալ, ուստի չկարողացան օգնել։ Ահմէտ չինած է նոր տուն մը իւր կնոջ համար, կամ լաւ է ասել ամրութիւն մը, որուն դուռը տանիքի վրայ է։ երբ ուզէ կնոջ սենեակը գնալ, սանդուխ մը դնում է տանիքի դռնէն և ցած իջնում է, և երբ մեկնելու լինի, սանդուխը վեր կառնէ և դուռը գոցելով գնում է, որպէս զի կինը չփախչի։ Երբ մի տեղ գնալու լինի, քանի աւուր համար որ է, այնքան պաշար դնում է կնոջ մօտ, նաև աղախին մը։ Եր-

բեմն լինումէ որ որոշեալ ժամանակին կարող չիլինիր վերադառնալ, ուստի խեղճ կնոջ պաշարը կը լմնայ և կը մնայ անօթի։ Բնական է նաև թէ կանայք արանց չափ չեն կարող կերակուր ուտել։ Ահմէտ պահանջում է որ կինը կերակուր շատ ուտէ և շատ անգամ ծեծում է այս պատճառաւ, ասելով թէ դուն կերակուր չես ուտեր որպէս զի նիհարանաս և մեռնիս, իմ ձեռքէս ազատիս։ Շատ անգամ աղջկան մայրը հրաւիրում է Ահմէտը իւր տունը, որպէս զի այս միջոցով կարողանայ իւր կնոջը սէրը շահել․ մի օր աղջկան մօրը ներկայութեամբ կանչում է Ռահանին կերակուրի, ստիպումէ կերակուր ուտել․ մի քիչ ճաշակելէն յետոյ ետ է քաշում, այն ժամանակ Ահմէտ երախայի պէս սեղանի վրայ գիրկն է առնում Ռահանին և մի քանի դգալ բռնութեամբ կերցնում է․ Ռահանի ախորժակը չտանելով փսխում է․ Ահմէտը բարկացած հայհոյում է և ծեծում Ռահանին։ Այսպէս շատ դիպուածներ կան այս բռնաբարիչ ընտանեկան կեանքին մէջ որոնք մէկիկ մէկիկ պատմել երկայն պիտի լինէր։ Ահմէտն զաւակներ ունի իւր կնոջմէ։

Գ․ ՂԱԶԱՐԵԱՆ

ՆԱՄԱԿ ՊՈՍԹԸՆԷ

20 Փետր․ 1894

… Խմբագիր,

Այս տողերս գրած պահուս ձեռքս կը դողդողայ, զի կը խորհիմ թէ ինչպէս գրելու եմ որ դուք հրատարակել հաճիք, և մանաւանդ ինչպէս բացատրելու եմ խնդիրը որ մեր հայրենակիցները չցաւին, այլ լրջօրէն խորհին ըսելիքիս վրայ։

Մեր մէջ մի քանի մոլութիւններ տարածուելու վրայ են։ Մեր երիտասարդաց բարոյականը քանի մը կողմէ վէրք ընդունելու վտանգին մէջ է։ Մէկն է ոգելից ըմպելիքներու վտանգը․ երկրորդն է բաղդախաղը, երրորդն է ինքնամատոյց ախտավաճառուհիներու յարաբերութիւնը, չորրորդն է գռեհիկ խօսակցութեան ապականիչ ազդեցութիւնը, և վերջապէս ծըխախոտը, իբրև չարեաց ընկերակից։

Այս հինգ գլուխներուն վրայ բաւական կրնայի խօսիլ։ Կարող էի ամեն մէկուն զոհերէն օրինակներ յիշել։ Բայց ի՛նչ պէտք է։ Ինչո՛ւ անանկ օրինակներ յիշեմ որ կարդացողներն իրարու նային, իրարու ակնարկեն և իրար բամբասեն անպատշաճ գուշակութիւններով։ Ես ընդհանուր կերպով յիշեցի․ այդքանը կը բաւէ։ Պոսթընի ընթերցող երիտասարդները կրնան իրենք յիշել օրինակները ու բացատրութիւնները։ Միթէ չգիտե՞ն անոնք թէ որքան դրամ և արիւն և ոյժ, ինչքան ժամանակ, ջիղ, և անդամներ զոհ տրուած են մոլութեանց այդ խաբեբայ չաստուածներուն․․․։

Հեռացէ՛ք, հեռացէ՛ք, ո՛ զաւակունք սգաւոր Հայաստանի, հեռացէ՛ք այդ խտալական քլիւպներէն ուր ապականութիւնն ծովացած է, հեռացէ՛ք այդ ճաշարաններէն ուր կեր կը լինիք դուք չարին և ոչ թէ կեր կը գտնէք․ հեռացէ՛ք այն ամեն վայրերէն, սեամերէն ու յարկերէն ուր ոչ թէ յագեցումն այլ քաղց կը գտնէք, ոչ գոհացում այլ եռք, ոչ բաղդի այլ ախտի կը հանդիպիք, և զանազան մոլութեանց շղթաներով կը կապուիք կը կաշկանդուիք, և Հայաստանի Մօր առջև իբրև ազատ և վեհ զաւակներ երևնալու անարժան կը լինիք։

Ո՜հ, եղբա՛րք իմ հայրենակիցք, մինչև ե՞րբ ազատութի՛ւն պոռանք և գերութեան նորանոր շղթաներով մեք մեզ կապենք։

* * *

ՆԱՄԱԿ ՀԷՅՎԸՐՀԻԼԷՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅԵՐՆ

Փետր․ 11, 1894

… Խմբագիր,

Պանդխտութիւնն ու գաղթականութիւնն մեր ազգին հալ ու մաշն եղած են դարերէ ի վեր։ Ամերիկայի մէջ այսօր 5—6,000 Հայ կայ, որոց մեծ մասն եկած է իբրև պանդուխտ, ոչ թէ իբրև գաղթական․ եկած է ինչպէս ուրիշներ կ՚երթան Պոլիս, Զմիւռնիա, Պաթում, Բագու, Բերիա և այլն։ Նպատակն է փող վաստկիլ և ընտանիքն հոգալ, կառավարութեան տուրքերն վճարել, վաշխառուին տոկոսներն հատուցանել, — թէև հատուցանելով չի հատնիր։ Այս տարի աւելի որոշ կերպով տեսնուեցաւ թէ Ամերիկայի պանդխտութիւնն ուրիշ պանդխտութենէ որ-

քան տարբեր է։ Գործերն գրեթէ դադրեցան և մենէ շատերն երկար ամիսներ անգործ և անփող մնացին. փոխ առին, ուտելու հաց դժուար գտան, շատերն վաճառեցին իրենց հարկաւոր կահն ու կարասին, մինչև անկողնոյ վերմակն։ Ցաւն հոն է որ հայրենիք վերադառնալու հնար չկայ. քանի մը տոլորով աշխարհէ աշխարհ չէ կարելի երթալ ինչպէս մարդ կրնայ քաղաքէ քաղաք երթալ. ովկիանոսն լողալով չանցնուիր և եւրոպայի ցամաքն բնական կօշիկներով չճանապարհորդուիր։ Այսպէս Հայ պանդխտին առջին ծով ետին սով է այս տարի։

Նեղութեան և փորձութեան մասնաւոր տարի մ'է այս, և պէտք որ մեր պանդխտակից եղբայրներն նեղութեան համբերեն և փորձութեանց դիմանան։ Ան ալ կ'անցնի։ Զլինի՛ թէ իրենց մխիթարութիւն փնտռեն գէշ ընկերութեան և ընտակար խաղերու մէջ. մանաւանդ թող իրար ետ պահեն ոգելից ըմպելիքներէ և ուրիշ մահաբոյր մոլութիւններէ։ Ժամանակն օգտակար կերպով անցունելու և սրտի նեղութիւն փարատելու ազնիւ ու գովելի կերպեր չեն պակսիր. թող ազգային թերթեր կարդան, թող լաւ լաւ գրքեր կարդան մէկտեղ և խօսին իրենց կարդացածներուն վրայ. թող գրել կարդալ սովրին. թող գոնէ իրենց անունն ու հասցէ մի գրելու չափ անգլիերէն գրելու վարժուին։ Ամօթ չէ՞. մարդ կայ որ հասցէ մի գրել տալու համար 10 սէնթ կը վճարէ։

Ոմանք ալ կ'ասեն թէ գործ չունին, ուստի և շուարած են և չեն կարող բան սովրելու զբաղիլ. այդ ալ յետին տկարութեան խոստովանութիւն է. պէտք է մի քիչ առաքինի լինիլ և ինքնիրեն խելքին, մտքին, ժամանակին տէր լինին։

Ա. Խ. Թ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ

ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՐՊԵՐ ԱՃՃԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ

Օր մի իմ մէկ հայ բարեկամի սենեակն էի և կարեւոր խնդրոյ մի վերայ կը խորհրդակցէինք։ Հասաւ հայ երիտասարդ մի և իւր վիճակի նկատմամբ խրատ խնդրեց բարեկամէս, որուն պաշտպանեալն էր ինքն։ Աթոռին վերայ նստաւ ծռած, ամշկոտ, ժպտուն փոքր մանկան մի պէս, և երբ խորհրդակցութիւնն եզրակացութեան յանգեցաւ, փոխտնակ շնորհակալութիւն մատուցանելով մեկնելու, նստած մնաց։ Հարկ եղաւ որ իմ բարեկամ ասէ— Թորոս, ահա այսպէս պէտք է անել, որպէս ասացի. այժմ կրնաս երթալ։ Եւ երիտասարդն ելաւ գնաց։

Այդ ալ թրքական ստրկութենէ յառաջ եկած տրամադրութիւն է, որով այցելուն կը սպասէ որ պատուաւոր տանուտէրն «գնա» ասէ որ երթայ, ինչպէս մարդ իւր ծառային կը հրամայէ «գնա՛», «ե՛կ»։ Ծառայի քաղաքավարութիւնն պէտք է թողուլ և քաղաքացւոյ քաղաքավարութեամբ վարուիլ։

Այցելութեան մասին դիտելու կարեւոր կէտ մ'ալ ժամն է։ Պէտք է այցելել պատեհ ժամուն։ Ամերիկայի մէջ, մինչեւ իսկ Թուրքիոյ մէջ ալ, յայտնի է թէ կերակրոյ ժամն ո՛րն է և այցելութեան ժամն ո՛րն։ Ամերիկայի մէջ երեկոյեան ժամ 6էն մինչև 7 ու կէս կերակրոյ ժամ է, և քաղաքավարութիւնն կը պահանջէ որ վաղ քան ժամ ութ այցելութիւն չլինի։ Բարձր շրջանաց մէջ ութ և կէս ժամն աւելի սովորական է։ Ոչ չափազանց կանուխ պէտք է երթալ և ոչ չափազանց ուշ մեկնիլ։ Մինչև իսկ ընտանի դարձած բարեկամներ պէտք է յարմար ժամուն մեկնին, և միշտ մտածեն թէ աւելի լաւ է որ չափազանց շուտ շարժին մեկնելու քան թէ չափազանց ուշ, զի հիւրընկալն կրնայ ադաչել որ պահ մի ևս մնայ հիւրն, եթէ սա չատ կանուխ մեկնիլ ուզէ։

Արեւելցւոց և արեւմտցւոց միջեւ քաղաքավարական սովորութեանց մասին կարեւորագոյն տարբերութիւններէն մին է չքմեղանք ընդունիլն և չընդունիլն։ Ամերիկայի մէջ մարդ մի կրնայ գործի, վաղագոյն յանձնառութեան կամ տկարութեան պատճառաւ ասել՝ կամ սպասաւորին ասել տալ ցայցելու բարեկամն՝ թէ տկար լինելով կամ այն ինչ արգելքով ստիպուած է ցաւ յայտնել որ չի կրնար այն օրն ընդունիլ հիւրն, և կը խնդրէ ուրիշ օր մի պատուել զինքն այցելութեամբն։ Այցելուն դոհ կը մեկնի և ուրիշ օր մի

կուգայ։ Բայց եթէ Հայու մի ասեն այդպիսի բան, կը կարծէ թէ դինքն անպատուեց բարեկամն, և այլ ևս բնաւ չայցելեր։

Դորա ուրիշ մէկ կերպն ալ կրնայ պատահիլ։ Հիւրընկալն մի քանի վայրկեան կամ աւելի երկար խօսակցելէ վերջ կըրնայ այցելուին ասել.—«Ներում կը խընդրեմ ձենէ որ ստիպուած եմ յառաջագոյն ժամադրութեան մի համար ձենէ բաժնուիլ յակամայից, կը յուսամ թէ մօտ օրեր աւելի երկար կը տեսակցինք։» Այցելուն, եթէ հասկացող մարդ է, բնաւ չի ցաւիր, այլ անմիջապէս գոհ դէմքով հրաժեշտ կ'առնու։

Ճշդապահութիւն ժամանակի փափուկ քաղաքավարութեան ապացոյց է, որ արեւելցւոց մէջ բոլորովին կը պակսի։ Տեսութեան, գործի, ժողովներու համար կանխաւ ժամ կը նշանակուի, բայց որպէս թէ նշանակուած չլիներ՝ այնպէս թոյլ և անհոգ կը շարժին։ Ժամ 8ին կ'ասեն, և ութ և կիսուն կը սկըսի ժողովը. կամ ժամ 2ին քառորդ մնացած կ'ասեն, բայց երկուքին հինգ վայրկեան մնացած կ'երթան, իբր թէ 10 վայրկեան բան մի չլիներ։ Քաղաքավար մարդն հազիւ կը ներէ ինքնիրեն մէկ կամ երկու վայրկենի ուշ կամ կանուխ գտնուիլն։ Ժամացոյցներն աժան են ներկայ դարուս մէջ, իսկ վայրկեաններն՝ տուղ։

«ՀԱՑՔ»Ի ԹՂԹԱԿՊՈՒԹԻՒՆ

Ց. Պ. Ի Գահիրէ։— Մէկ օրինակ ըստացայ, շնորհակալ եմ։ Գործն արուեստէ զուրկ է, և ես արդէն ժամանակ չունիմ։

ԱՆԳԼԻԵՐԷՆ ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Արժան է յիշեցուցանել մեր արգոյ ընթերցողաց թէ 1892ին հրատարակուած է անգլիերէն լեզուաւ ընտիր Հայոց պատմութիւն մի, Armenians, or the People of Ararat, 220 երեսներէ բաղկացեալ։ Գինն է մէկ տոլար։ Փափաքողք պէտք է դիմեն հեղինակին, հետեւեալ հասցէիս.—

Rev. M. C. Gabrielian, M. D.
925 N. 13th St. Philadelphia, PA.

ՍՑԼ ԵՒ ՍՑԼԻՔ

ՇԱՀՆ ԶԷ ՍՈՒԼԹԱՆԻ ՊԷՍ

Ուրմիոյ կողմն, ի Պարսկաստան, ամերիկացի միսիոնար Պատ. Ս. Փիէր, ձիով ոուն վերադարձած պահուն, ճամբան 4 չարագործներ կը յարձակին իւր վերայ և անտառն տանելով կը կողոպտեն, կը մերկացուցանեն և կիսամերկ կը թողուն հոն։ Եղելութիւնն իմանալով Թեհրանի ամերիկեան դեսպանն Նախարարապետին կը հաղորդէ և ոճրագործներուն պատժուիլն կը պահանջէ։ Եւ արդարեւ, Նախարարապետին խիստ հրամաններուն համեմատ՝ չարագործներու չորսն ալ կը ձերբակալուին և կախաղան կը հանուին։ Այս արագ և խիստ պատուհասն մեծ գոհութիւն պատճառած է դեսպանին և պատիւ կը բերէ Պարսից կառավարութեան։

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՏԱՐԵԴԱՐՁՆ

Նիւ Եորքի «Թրիպիուն»էն կը տեղեկանամք թէ Փետր. 22ին քաղաքիս Թուրք և արաբ օսմանեան հպատակք Սուլթանի ծննդեան 50րդ տարեդարձն տօնած են։ Ոմն ճառ խօսեր և փառիշահին անխոնջ և յառաջադիմասէր գործունէութիւնն ներբողեր է. իսկ ուրիշներ արևելեան շարքիներ են կերկերեր և շաքարներ են կերեր։ Առատ է եղեր շէրպէթ և ընկոյզ գլանիկ և կկլոց։ Ի ձայն քանոնի և քէմէնչէի բաւական ոգևորեալ կաքաւանք են կաղացեր և շատ գուարթ ու գուարճ գիշեր մեն ըլսցուցեր։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՒԻՂ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՑԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Առաջին թիւն ստացանք։ Թերթն համակրելի է, և կը յուսամք թէ Պարսկահայոց զարգացման պիտի ծառայէ։

Բաժանորդագինն է օտար երկրաց համար 8 ֆրանք կամ 3 ռուբլի (1 տոլար 60 սենթ։)

Պէտք է դիմել խմբագրութեան հետեւեալ հասցէիս—

Redaction du CHAVIGH,
Teheran, PERSE

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E :(Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ ։

Գ· ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ-ԳՈՐԾԱԿԱԼ
Ի ՌՈՒՍՃՈՒՔ

Պատիւ ունի ծանուցանել Պուլկարիոյ և Ռումանիոյ պատուարժան ազգայնոց թէ՝ բացի ամեն տեսակ (հայ լեզուաւ) գրեանց և զանազան պատկերներու յանձնակատարութենէ՝ ստանձնած է նաև գործակալութիւնն հետեւեալ հրատարակութեանց .

ԱՐԱՔՍ վեցամսեայ պատկերազարդ . ՀԱՅՔ կիսամսեայ հանդէսներու և ՀԱՅՐԵՆԻՔ ամենօրեայ թերթի ։

Յանձնակատարութիւնք կը կատարուին արագ և կանոնաւոր կերպով ։

Վճարմունք կանխիկ են ։

Հասցէ— K. DEUKMEJIAN
Roustchouk, BULGARIE

ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ ԵՂԲԱՐՔ

Ց·ԷՔԻԶԵԱՆ

EKIZIAN BROTHGRS
30 Eddy St. Providence R. I.

Անցեալ տարուան Միացեալ Նահանգաց դէպի Եւրոպա մեր ունեցած ստակի փոխադրութեան համեմատութիւնն արդիւնաւոր ըլլալուն՝ ներկայիս կը խոստանամք որ ա՛լ աւելի զոհողութիւններ անեմք ։

Անոնք որ կը կարօտին ստակի փոխադրութիւններ անել դէպի Եւրոպա կամ Թուրքիոյ կողմերն, ամեն մէկ քաղաքի իրենց համեմատութեամբն կարգադրած ենք որ թէ մեր անձնական տուներու և թէ մասնաւոր գործակատարներու ընդունելութեան պայմանաւ փոխանակագրեր պիտի ծախենք գոհացուցիչ կերպով ։

Այս նկատմամբ մեր հասցէին գրուած նամակներու մասնաւոր ուշադրութիւն անելով անմիջապէս պիտի պատասխանենք ։

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ · աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան · Տպարան Մ · Ս · Գաբրիէլեանի գին50 սէնթ կմ 2ու կէս Ֆրանք ։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած · գրեաց Մ · Ս · Գաբրիէլեան ։ Գին 20 սէնթ կմ 1 Ֆր ·

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
Մ · Ս · ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն ։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգյին ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն ։

Գին 20 սէնթ կամ մէկ Ֆրանք ։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ · Ս · Գաբրիէլեանի ,1891, գին 1 Թալէր կամ 5 Ֆրանք ։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ · Ս։ Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի ։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ ։

*

* *

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ. Փողոց

Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով: Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր:

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու   Նիւ Եորք

26դ. և 27դ. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE.   NEW YORK

27դ. և 28դ. փողոցաց միջև

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Գ Ե Ղ Ա Գ Ո Ր Ծ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St.   Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ
Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանելու թէ
1554 B,way
46 և 47 փողոցներուն միջև

Constantinople Bazzarի, (ԲՈՆՍԹԱՆԹԻՆՈՓԼ ՊԱԶԱՐ) մէջ ունի Թրքական մեծաքանակ գորգեր(խալիներ)և Թրքական ուրիշ ապրանք, զորս կ՚ուզէ բոլորովին ծախել լմնցունել յոյժ ԴԻՒՐԱԳՆԻ, ՀՈԼՍԷՅԼՈՎ (wholesale): Արդ, վաճառականներ որոնք այս գործով կը զբաղին, կրնան այս պատեհութենէն օգուտ քաղել, աժանագին հոլսէյլ ապրանք գնելու:

NATIONAL MUTUAL
INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ի՞նչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մը, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ՚ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալէրի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէրն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողները «Հայք» ի խմբագիրէն կրնայ աւելի տեղեկութիւն տալ